№ 213 Նոյեմբերի 14 (26) 1881 Նոյեմբերի 14 (26) № 213

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուրլ. կէս տարվանը 6 բուրլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Ստացողագրացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչի ոչինչ առաջադիմութիւն չենք անում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ցարիցինից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլիա. Ֆրանսիա. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՌՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մի քանի խօսք ֆիլօկսէրայի մասին.

ԻՆՉԻ ՈՉԻՆՉ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆ ՉԵՆՔ ԱՆՈՒՄ

Շատ անգամ մենք մեզ հարց ենք առաջարկել. ինչի մենք հայերս, որտեղ և ապրէինք, Ռուսաստանում, Թիւրքիայում, թէ Պարսկաստանում,—ոչինչ առաջադիմութիւն չենք անում:

Այդ հարցի պատասխանը, մեր կարծիքով, կարող է հետևեալը լինել:

Հայոց հասարակութիւնը կարելի է բաժանել երեք որոշ մասերի վրա: Առաջին մասը կազմում են այն մարդիկ, որոնք մըտածում են միմիայն իրանց անձի, իրանց ընտանիքի օրական ապրուստի մասին, որոնք ոչ ընդունակութիւն, ոչ էլ ժամանակ ունեն մտածել ընդհանրութեան վրա և նրա համար աշխատել, այլ ապրում են միմիայն իրանց օրական ապրուստը պահպանելու համար: Սրանց մէջ կան և երկրագործներ և արուեստաւորներ և հոգևորականներ և պաշտօնեաներ և ուսուցիչներ և վաճառականներ: Սրանք կամ այնքան ոգէտ են դեռ ևս, որ ընդունակ չեն մտածել և հոգալ ընդհանրութեան առաջադիմութեան վրա, կամ եթէ մտաւորապէս զարգացած են և կուզենային էլ իրանց ոյժերը նուիրել ազգի ընդհանուր առաջադիմութեան գործին, չեն կարող ընդհանրութեան համար աշխատել, որովհետև չքաւոր են կամ շատ համեստ կարողութեան տէր մարդիկ են և իրանց ամբողջ կեանքը պէտք է անցնեն անձնական ապրուստի մասին հոգալով, ժամանակ չունենալով հոգալ ընդհանրութեան վրա:

Հասարակութեան երկրորդ մասը կազմում է մեր ունևոր դասակարգը, որ կուենար և ժամանակ և ընդունակութիւն և նիւթական միջոցներ ազգին ծառայելու, բայց այն ասպիճան օտարացած է ազգից, որ հարկաւոր չէ համարում աշխատել ընդհանրութեան համար: Օտարացած, խորթացած լինելով ազգի կեանքից, սրանք արհամարհում են ամեն բան ինչ որ հայոց է, արհամարհում են իրանց մայրենի լեզուն, դարձել են եսական, անտարբեր դէպի ազգի կարիքները և ապրում են միմիայն անձնական կեանքը վայելելու համար:

Կայ, վերջապէս, մեր հասարակութեան մէջ մի երրորդ մասը, որ ազգի մի շատ աննշան փոքրամասնութիւն է կազմում, որ ամեն ջանքեր է թափում, շատ անգամ նոյն իսկ ի վնաս իր անձնական շահերի, ընդհանրութեան համար հոգալու, նրան իր ամբողջ կեանքը նուիրելու: Բայց և այդ տեսակների ջանքերը ապարդիւն են անցնում, անգամալուծված լինելով ամեն տեսակ արգելքներով:

Ընդհանրութեան համար աշխատող, ազգի առաջադիմութեանը նուիրված փոքրիկ խմբի գործունէութիւնը մեզանում հանդիպում է ամեն տեսակ արգելքների. մի կողմից ամբոխի տգիտութիւնը և ազգի եսական մեծամասնութեան անտարբերութիւնը, իսկ միւս կողմից հայ հասարակութեան մէջ գտնվող յայտնի շահասէր և բաղդախնդիր մարդկանց ինտրիգաները, և նրանց ստոր մտադրութիւնները,—ահա այն արգելքները, որոնք մեռցնում են գործող խմբի աշխատութիւնները ազգի առաջադիմութեան օգտին:

Ամբոխը, մեծամասնութիւնը ապրում է օրական հացը վաստակելու համար, ունևորները անտարբեր են, եսական են, արհամարհում են իրանց մայրենի լեզուն, իրանց ազգի կեանքը. մնում է մարդկանց մի փոքրիկ խումբ, որ թէև նուիրված է ազգի առաջադիմութեան գործին, բայց իր գործունէութեան մէջ անդամալուծված է՝ տգիտութեամբ, անտարբերութեամբ, ինտրիգաներով և մատնութիւններով:

Այդպիսով, ի հարկէ, անհնարին է բացատրել որ և է առաջադիմութիւն ազգի մէջ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՑԱՐԻՑԻՆԻՑ

Հոկտեմբերի 26-ին

«Մշակ»-ի 190 համարի բանասիրականի «Բագուի նաւթային հարցը և հայերը» վերնագրով յօդուածի առիթով մի քանի խօսք կամենում եմ ես ևս ասելու.—Այդ յօդուածի մէջ ճշտութեամբ նկարագրված է նաւթային գործի այժմեան վիճակը, որի համար կը վկայեն բոլոր պարագաները այդ գործով: Բայց միայն վիճակը նկարագրելը և մատնացոյց լինելը մութեան կէտի վրա բաւական չէ: Մենք մեր ազգի պատմութեան էջերում շատ անգամ կարդացել ենք ազնուական գանգատներ մեր հայերի անմիաբանութեան համար և մենք, մեր նախնիների թոռներս, մեր չոր ու ցամաք քարոզներով մեր անցեալի սխալները ուղղել չենք կարող. մենք միաբանութիւնը, կրկնում ենք, մոցնել չոր ու ցամաք խօսքերով հայերի մէջ չենք կարող. մեզ հարկաւոր են միջոցներ, փաստերի վրա հիմնված, շօշափելի դարձնել ազգի ամեն մի անհատի համար, մի խօսքով որոնել սիստեմա, որով ամեն մի անհատ անզգալի կերպով ինքն իրան առանց ստիպման մղվի դէպի միութեան գործը: Արդէն պ. Նիկողոսեանը Կ. Պոլսից իր համակրելի յօդուածների մէջ հասել է այն եզրակացութեան, որ արդար չէ այն խօսքը թէ հայերի մէջ միութեան հոգի չը կայ. այդ միութեան ոգին կայ, միայն հարկաւոր է սիստեմա կենդանացնելու ազգային գործերը: Հայերին ժողովել միատեղ և կազմել ինչ և իցէ ընկերութիւն, ասում են թէ անկարելի է. բայց ես կասեմ թէ շատ դիւրին է: Միայն կանխապէս դուք յօրինեցէք ընկերութեան կանոնագրութիւնը այնպիսի պայմանների վրա, որ ամեն մի անհատ պարզ տեսնի ապագայ գործի ամեն կողմերը, հաստատ տուածների վրա հիմնված, ոչ թէ որպէս մի երազ:

Անցնում եմ այժմ մամանաւորին, դիտաւորութիւն ունենալով խօսելու մեր նաւթային արդիւնաբերութեան վրա: Շատ անգամ Ցարիցինի մէջ ոմանք վաճառականներից պարագլուխ են եղել կազմելու մէկ ժամանակաւոր ընկերութիւն ֆոտոգենի գները պահպանելու համար, բայց գործը միշտ վերջացել է անհամաձայնութեամբ. տակաւն անցնում 1880 թուին այդ գաղափարը մեծ համակրանք ընդունվեցաւ ամենից հէնց առաջին նիստի մէջ: Բայց դժբաղդաբար գործը լոկ համակրութեամբ վերջացաւ: Պ. Շիրվանզադէն խորհուրդ է տալիս մեզ կազմակերպելու նոյն սիստեմայով նաւթային արդիւնաբերութիւնը, ինչ որ այժմ ունի չվեդացի Նոբէլը. նաւերով ֆոտոգենը տեղափոխելով Ցարիցինի մէջ: Շատ բարի: Խօսքը ֆոտոգենը տեղափոխելու սիստեմայի վրա չէ, այլ ընդհանուր արդիւնաբերութեան սիստեմայի վրա է: Պէտք է այնպիսի սիստեմա իրագործել, որ ամեն ոք սրտի ուրախութեամբ յարակցի գործին: Եւ բացի այդ պէտք է կանխապէս նայած թէ այն սկզբունքը, որի վրա է հիմնված Նոբէլի գործը, արդեօք կարող ենք մենք գլուխ բերելու, այսինքն կան համախոհներ, կայ ժամանակ և վերջապէս գլուխ բերելուց յետո, կայ հնար չվեդացի Նոբելի հետ մրցելու: Նոբելի գործը հիմնված է հինգ գլխաւոր հիմունքների վրա 1) սեփական նաւթի հանքեր, 2) սեփական խողովակ նաւթը Բագու տեղափոխելու, 3) սեփական գործարան, ֆոտոգէն պատրաստելու, 4) սեփական հեղալից նաւեր և 5) սեփական հեղալից վագոններ: Ահա հինգ սկզբունքներ, որոնց վրա է գլխաւորապէս հաստատված նրա վիթխարի գործառնութիւնը: Այժմ դիցուք մի որ և է կախարդական զօրութեամբ բագուցիքը կազմակերպեցին այն ամեն միջոցները, ինչ որ ունի Նոբել, այն ժամանակն էլ ֆոտոգէնը կարժենայ Նոբելին նոյնը, ինչ որ և նոր ընկերութեան. ապա թէպէտ պէտք է մրցեն իրանց հակառակորդի հետ: Բայց չը մոռանաք որ կախարդական զօրութիւն աւացինք, պատճառ որ այդ տեսակ գործ բնական ճանապարհով բերել կարելի վազերը չեն կարող ընդդիմանալ ֆիլօկսերային: Միւսը ընդհակառակ տեսնում է, որ ֆիլօկսերան ոչինչ վնաս չէ տալիս Ամերիկայի վազերին և նա, ի հարկէ, հաստատում է թէ վազը լաւ է ընդդիմանում ֆիլօկսերային: Թէ ինչից է որ մի և նոյն վազը մի անգամ կամ մի տեղ չորանում է ֆիլօկսերայից, իսկ միւս անգամ միւս տեղում չէ չորանում՝ հազիւ թէ կարելի է վճռել ընդհանրապէս. միայն ասեն մի առանձին դիտաւորեալ կարելի է գտնել ընդդիմանալու կամ չընդդիմանալու պատճառը: Առհասարակ կարելի է միայն հաստատել, թէ կան այնպիսի հանգամանքներ, երբ ֆիլօկսերան է լաւ բազմանում և աճում՝ և նմանապէս կան այն տեսակ հանգամանքներ, երբ վազն է լաւ զարգանում: Նայած նրան, թէ այս հանգամանքներից որը աւելի ուժեղ կը լինի, վազը կարող է շատ կամ քիչ ընդդիմանալ ֆիլօկսերային: Խօսքս պարզելու համար կը բացատրեմ թէ ֆիլօկսերայից ինչ տեսակ հիւանդութիւն է առաջ գալիս:

Մեզ յայտնի է, որ ֆիլօկսերան ծակում է վազի արմատը՝ որից վազը երբեմն չորանում է, իսկ երբեմն—երբ վազը ունի իր մէջ այնքան զօրութիւն՝ որ կարող է ընդդիմանալ—չէ չորանում: Այսպէս մի կողմից ֆիլօկսերան աշխատում է սպանել վազին, իսկ միւս կողմից վազը, ինչպէս և ամեն կենդանի կազմուածք, աշխատում է ընդդիմանալ ֆիլօկսերային և ապրելու: Այստեղ ունենք «գոյութեան կռիւ» մի օրինակը: Ուրեմն այստեղ մատնչում են երկու զօրութիւններ — ֆիլօկսերան, այն է հիւանդութիւնը և վազը: Եթէ վազն է մնում յաղթող այս պատերազմում՝ ասում են վազը ընդդիմանում է ֆիլօկսերային, ուրեմն իր մէջ մի առանձին ընդունակութիւն ունի ընդդիմանալու ֆիլօկսերային: Իսկ եթէ ֆիլօկսերան է յաղթում, ասում են վազը չունի ընդդիմանալու ընդունակութիւն:

Վազերի բոլոր տեսակները մի առ ժամանակ ընդդիմանում են ֆիլօկսերային և բոլորն էլ վերջը չորանում են, միայն այն զանազանութեամբ որ մէկ տեսակը միայն երկու երեք տարի է պտուղ տալիս և յետոյ չորանում, իսկ միւսը տասն և հինգ տարի և առաւել: Թէ ինչից է, որ մի վազը ընդդիմանում է առաւել լաւ քան թէ միւսը, այդ դեռ մինչև այսօր յայտնի չէ: Ոչ խոշորացոյցը և ոչ քիմիական հետազօտութիւնները դեռ ոչինչ չեն բացատրել: Կարելի է միայն ասել, որ այն վազը, որի փչացած արմատների տեղ չուտ դուրս են գալիս նոր արմատները որ առաւել լաւ է տնկած գետնում, այսինքն առաւել լաւ է կերակրվում գետնից և օդից, այն վազը որ առաւել առողջ է, առաւել զօրեղ է՝ նա լաւ կարող է ընդդիմանալ ֆիլօկսերային: Այստեղ յայտնի բնական օրէնքն է ներգործում,—այն կազմուածքն է առաւել լաւ ընդդիմանում զանազան հիւանդութիւններին՝ որը առաւել առողջ է. բարակացաւից հիւանդ մարդը հազիւ թէ կարող է ընդդիմանալ մի ինչ և իցէ հիւանդութեանը. բացի չորութիւնից և առողջութիւնից այստեղ ներգործում է մի ուրիշ հանգամանքն էլ, այն է վազի հիւանդութեան պայմաններին յարմարվելու ընդունակութիւնը. Ամերիկայի վազը և ֆիլօկսերան երկուսն էլ մէկ երկրի պտուղներն են: Նրանք միշտ ապրել են միասին,— միշտ մարտնչել են միմեանց հետ՝ այնպէս որ Ամերիկայի վազը առաւել յարմարեցրած է (приспособлять) այս հիւանդութեան և ուրեմն առաւել հեշտ է ընդդիմանում նրան:

Ֆիլօկսերայի հետ պատերազմելու միջոցների հետազօտելու նպատակով կայացած ժողովը Սարգսում, որը կազմված էր զանազան երկիրների գիտնականներից և այգեպաններից, հաստատեց, որ այն միջոցները, որոնց նպատակն է ֆիլօկսերայի ջնջելը՝ կարելի է գործածել միայն այն ժամանակ, երբ ֆիլօկսերան փոքր տարածութիւն է բռնել՝ իսկ երբ նա շատ մեծ տեղ է բռնել, այն ժամանակ անկարելի է այդ միջոցները գործածել: Որա պատճառը ոչ թէ միայն այն է, որ ջնջելու միջոցներ (ածխային ծծումբ, ածխածծբային կալի, քանտակին կալի և այլն) չեն ազդում, այլ այն պատճառով որ այդ միջոցը գործածել այդ դէպքում այնքան թանգ է նստում, որ բոլոր այգին չարժէ այդ գնին: Մի և նոյն նիստը հաստատեց, որ ֆիլօկսերայի հետ